

Ժամկետային ավանդ «ՀԱՅԲԻՉՆԵՍԲԱՆԿ-ԷԲՍԿԼՅՈՒԶԻՎ»

1. Ավանդի ընդունման ընդհանուր պայմաններ.

- Ավանդների տարեկան տոկոսադրույքները.

Արժույթի տեսակը	Միջոցների ներդրման ժամկետը (օր), տարեկան տոկոսադրույքը (%)	
	91-180	181 օր և ավելի
ՀՀ դրամ	9.5	10.0
ԱՄՆ դոլար	9.0	9.5

- **Ավանդի արժույթը`** ՀՀ դրամ, ԱՄՆ դոլար:
- **Ավանդի ներդրման համար սահմանվող նվազագույն գումարը`** 7 000 000 ՀՀ դրամ կամ 15.000 ԱՄՆ դոլար:
- **Ավանդի համալրում`** առանց գումարի և հաճախականության սահմանափակման, բացառությամբ` ավանդի մարման ժամկետին նախորդող 30 (երեսուն) օրը:
- **Տոկոսագումարների վճարման հաճախականությունը`** Տոկոսագումարները վճարվում են յուրաքանչյուր ամիս կամ ավանդատուի ցանկությամբ հաշվեգրված տոկոսները յուրաքանչյուր ամիս կարող են գումարվել ավանդի գումարին:
- **Տոկոսների հաշվարկ`** Բանկը տոկոսների հաշվարկն իրականացնում է հաշվում առկա ավանդի ամբողջ գումարի նկատմամբ, ավանդային պայմանագրի ողջ ժամկետի համար` օրական կտրվածքով: Ընդ որում, Բանկը յուրաքանչյուր օրվա տոկոսադրույքը հաշվարկում է սահմանված տոկոսադրույքի առնվազն 1/365 հարաբերակցությամբ (իսկ նահանջ տարվա համար բանկը օգտագործում է 1/366 հարաբերակցությունը):
 - **Ավանդատուի ցանկությամբ անվճար (առանց սպասարկման վճարի և հաշվի չնվազող մնացորդի) տրամադրվում է MasterCard Gold կամ VISA Gold տեսակի պլաստիկ քարտ.**
- Կանխիկ մուտքագրված ավանդները և դրանց դիմաց կուտակված տոկոսները տրամադրվում են առանց միջնորդավճարի` 0 ՀՀ դրամ:
- Անկանխիկ մուտքագրված ավանդները, որոնց ժամկետը 30 օր և ավելի է տրամադրվում են առանց միջնորդավճարի` 0 ՀՀ դրամ, իսկ մինչև 30 օր ժամկետով մուտքագրված և ժամկետից շուտ պահանջվող ավանդները տրամադրվում են համաձայն Բանկի կողմից մատուցվող ծառայությունների սակագների:

2. Այլ պայմաններ և սահմանափակումներ.

- Ավանդատուն իրավունք ունի ավանդը ներդնել հօգուտ երրորդ անձի` ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:
- Եթե ավանդը ներդրվում է արտարժույթով, ապա Ավանդատուն գրավոր հավաստում է, որ ավանդային պայմանագիրը կնքելու պահին գիտակցել ու ընդունել է արտարժույթի փոխարժեքի փոփոխման հետևանքով հնարավոր ռիսկերը:
- Ավանդատուի նախաձեռնությամբ ավանդային գումարը կամ դրա մի մասը ժամկետից շուտ հետ պահանջելու դեպքում Բանկը վճարում է տոկոսներ` համաձայն ցպահանջ ավանդների համար Բանկի կողմից սահմանված դրույքաչափի, եթե տվյալ ավանդատեսակի համար այլ բան նախատեսված չէ պայմանագրով: Եթե Բանկը Ավանդատուին վճարել է Բանկային ավանդի պայմանագրով նախատեսված տոկոսները, ապա Բանկը Ավանդատուի ավանդը ժամկետից շուտ վերադարձնելու պահանջը ստանալուց հետո վերահաշվարկ է կատարում և ավանդի գումարից պահում է Ավանդատուին վճարված տոկոսագումարները, այնուհետև` վերադարձնում վերահաշվարկման արդյունքում մնացած գումարը:
- Ավանդատուի նախաձեռնությամբ ավանդային գումարը կամ դրա մի մասը ժամկետից շուտ հետ պահանջելու դեպքում Ավանդատուն վճարում է տվյալ պլաստիկ քարտի տարեկան վարձ` համաձայն Բանկի կողմից մատուցվող ծառայությունների սակագնի:
- Ավանդի ժամկետի երկարաձգման դեպքում օրերի և ավանդի դիմաց տոկոսների հաշվարկը սկսվում է երկարաձգման օրվանից ներառյալ:
- Համաձայն ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 907 հոդվածի 1-ին կետի, Բանկային ավանդի գումարի վրա տոկոսները հավելագրվում են ավանդը Բանկ մուտք լինելու հաջորդ օրվանից մինչև այն Ավանդատուին վերադարձնելու կամ Ավանդատուի հաշվից այլ հիմքերով դուրս գրելու օրվան

նախորդող օրը:

- Ավանդատուն կարող է ցանկացած ժամանակ պահանջել Բանկից վերադարձնել ավանդի գումարը և հաշվեգրված համապատասխան տոկոսագումարները:
- Բանկը պարտավոր է ավանդի գումարը վերադարձնել Ավանդատուին նրա առաջին իսկ պահանջով, մինչև ավանդային պայմանագրով նախատեսված ժամկետի ավարտը:
- Ավանդատուն պարտավոր է պահպանել ՀՀ օրենքների և դրանց համապատասխան սահմանված բանկային կանոնների, ժամկետային ավանդների ընդունման մասին Բանկում գործող ընթացակարգերի պահանջները:
- Ավանդը վերադարձվում է Ավանդատուին այն արժույթով, որով ներդրվել է այն, բացառությամբ՝ Բանկի կողմից հայտարարված այն ավանդատեսակների, որոնց համար նախատեսված է Բանկային ավանդի պայմանագրի գործողության ժամկետի ընթացքում ավանդի արժույթի փոխարկում այլ արժույթի, ընդ որում Ավանդատուին վերադարձվում է վերջին փոխարկման ժամանակ նրա կողմից ձեռք բերված արժույթը:
- Ավանդը, դրա մասը և (կամ) դրա վրա հաշվեգրված տոկոսները ստանալիս՝ Ավանդատուն Բանկ է ներկայանում անձը հաստատող կամ փոխարինող փաստաթղթով, Բանկային ավանդի պայմանագրի և ավանդի գումարը մուտքագրումը հավաստող բանկային փաստաթղթի իր բնօրինակներով:
- Պայմանագիրը կորցնելու դեպքում, հասցեի փոփոխության, Ավանդատուին նույնացնելու համար այլ անհրաժեշտ փաստաթղթերի կորստի կամ փոփոխության դեպքում, Ավանդատուն պարտավոր է 10 (տաս) բանկային օրվա ընթացքում տեղյակ պահել Բանկին անհրաժեշտ ձևակերպումներ իրականացնելու համար, ընդ որում Ավանդատուն կրում է պատասխանատվություն հիշյալ ժամկետում Բանկին համապատասխան փոփոխությունների մասին չտեղեկացնելու հետևանքների համար:
- Եթե ավանդի վերադարձի կամ երկարաձգման օրը համընկնում է ոչ աշխատանքային օրվա հետ, ապա վերադարձը կամ երկարաձգումը կատարվում է ոչ աշխատանքային օրվան հաջորդող առաջին աշխատանքային օրը՝ ոչ աշխատանքային օրերի համար վճարելով տոկոսներ:
- Բանկը պարտավոր է Ավանդային պայմանագրի գործողության ընթացքում կատարված փոփոխությունները՝ պայմանագրի պայմանների, կողմերի իրավունքների, պարտականությունների, պատասխանատվության, տարեկան տոկոսային եկամտաբերության և այլն պայմանների վերաբերյալ, առնվազն 15 (տասնհինգ) օր առաջ, գրավոր, փոստային կապի միջոցով տեղեկացնել Ավանդատուին:
- Արժույթային կարգավորման և արժույթային վերահսկողության մասին ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն, ֆինանսական գործառնությունների դիմաց վճարվող տոկոսագումարներն իրականացվում են ՀՀ դրամով:
- Բանկը, հանդիսանալով հարկային գործակալ, ֆիզիկական անձ-Ավանդատուի հարկային պարտավորությունները կատարելու նպատակով, Ավանդատուին վճարվելիք տոկոսագումարից իրականացնում է գանձում՝ համաձայն «Եկամտահարկի մասին» ՀՀ օրենքի, որը հաշվարկվում է 10 (տաս) տոկոս դրույքաչափով:

3. Ավանդատուի իրավունքների պաշտպանությունը՝

- Ավանդային պայմանագրից բխող բոլոր առաջանալու դեպքում, Ավանդատուն կարող է պաշտպանել իր խախտված իրավունքները դիմելով Բանկ, անհամաձայնության դեպքում՝ դիմել դատարան կամ Ֆինանսական համակարգի հաշտարարին:
- Բանկը պարտավոր է քննել Ավանդատուի բոլոր-պահանջը, եթե այն ներկայացվել է մեկ տարվա ընթացքում՝ սկսած այն պահից, երբ Ավանդատուն իմացել է կամ կարող էր իմանալ իր իրավունքի խախտման մասին:
- Բանկը պարտավոր է 10 (տաս) աշխատանքային օրվա ընթացքում Ավանդատուին տալ վերջնական պատասխան: Բանկի պատասխանը Ավանդատուին չբավարարելու դեպքում, վերջինս վեց ամսվա ընթացքում կարող է դիմել Ֆինանսական համակարգի հաշտարարին, համաձայն «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» ՀՀ օրենքի, կամ դիմել դատարան՝ օրենքով սահմանված կարգով: Ֆինանսական համակարգի հաշտարարը իրավունք ունի քննելու այն պահանջները, որոնք ներկայացվել են հաճախորդի կողմից կազմակերպության դեմ, կապված են կազմակերպության կողմից մատուցվող ծառայությունների հետ և պարունակում են 10 000 000 ՀՀ դրամ կամ դրան համարժեք այլ արժույթով գումարը չգերազանցող գույքային պահանջ:

4. Երաշխավորված ավանդի չափերը՝

«Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» ՀՀ օրենքի համաձայն, ՀՀ տարածքում գործող բանկերում ֆիզիկական անձանց (այդ թվում՝ անհատ

ձեռնարկատերերի) բանկային ավանդների հատուցումը երաշխավորված է Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի կողմից:

Երաշխավորվում են ավանդատուի ինչպես դրամային, այնպես էլ արտարժութային ավանդները: Օրենքով սահմանված են երաշխավորված ավանդների հետևյալ չափերը.

- եթե ավանդատուն բանկում ունի միայն դրամային բանկային ավանդ, ապա երաշխավորված ավանդի չափը երկու միլիոն հայկական դրամ է.
- եթե ավանդատուն անվճարունակ բանկում ունի միայն արտարժութային բանկային ավանդ, ապա երաշխավորված ավանդի չափը մեկ միլիոն հայկական դրամ է.
- եթե ավանդատուն անվճարունակ բանկում ունի դրամային եւ արտարժութային բանկային ավանդներ, եւ դրամային բանկային ավանդի գումարը մեկ միլիոն հայկական դրամից ավելի է, ապա երաշխավորվում է միայն դրամային ավանդը՝ մինչեւ երկու միլիոն հայկական դրամով.
- եթե ավանդատուն անվճարունակ բանկում ունի դրամային եւ արտարժութային բանկային ավանդներ, եւ նրա դրամային բանկային ավանդի գումարը պակաս է մեկ միլիոն հայկական դրամից, ապա երաշխավորվում է դրամային բանկային ավանդն ամբողջությամբ եւ արտարժութային բանկային ավանդը՝ մեկ միլիոն դրամի եւ հատուցված դրամային բանկային ավանդի տարբերության չափով:

Ավանդատուի՝ նույն բանկում ունեցած բոլոր դրամային ավանդները համարվում են մեկ ավանդ եւ ավանդատուի՝ նույն բանկում ունեցած բոլոր արտարժութային ավանդները համարվում են մեկ ավանդ:

5. Տարեկան տոկոսային եկամտաբերության չափը՝

Տարեկան տոկոսային եկամտաբերության չափը դա այն տոկոսն է, որն անձը կստանա 1000 ՀՀ դրամ ավանդի դիմաց 365-օրյա ժամանակահատվածում տարեկան պարզ տոկոսադրույքի կիրառմամբ եւ տոկոսների կապիտալացման ու վճարման հաճախականության հետևանքով:

Տարեկան տոկոսային եկամտաբերության հաշվարկը կատարվում է հետևյալ ստանդարտ բանաձևերի կիրառմամբ.

- պարզ տոկոսադրույք.

$$Sp = [P * i * t / K] / 100 - T,$$

որտեղ Sp – ստացվելիք տոկոսագումարը,

P – ներդրվող ավանդի գումարը,

i - ավանդի տարեկան տոկոսադրույքը,

t – ավանդի դիմաց տոկոսների հաշվեգրման օրերի քանակը,

K – տարվա օրերի քանակը,

T - եկամտահարկի դրույքաչափը:

Այսինքն՝ $Sp = [1\ 000 * 10.0 * 363 / 365] / 100 - 10\% = 89.5$ ՀՀ դրամ:

- տոկոսների ամենամսյա կապիտալացում.

$$Sp = (P * [(1 + i * t / K / 100)^n - 1]) - T$$

կամ

$$Sp = (P * (1 + i * t / K / 100)^n - P) - T,$$

որտեղ n – տոկոսների հաշվեգրման հաճախականությունը (օրինակ՝ 365 օրվա համար այն կլորացված կկազմի $n = 365 / 30 \approx 12$, 181 օրվա համար՝ $n = 181 / 30 \approx 6$, 91 օրվա համար՝ $n = 91 / 30 \approx 3$ եւ այլն):

Տոկոսների ամենամսյա կապիտալացմամբ հաշվարկում (t) ընդունվել է կլորացված 30 օր ($t \approx 30$), քանի որ տոկոսները հաշվեգրվում են ամսական՝ կախված տվյալ ամսվա օրերի քանակից:

Այսինքն՝ $Sp = (1\ 000 * [1 + 10.0 * 30 / 363 / 100])^6 - 1\ 000) - 10\% = 45.6$ ՀՀ դրամ:

6. Տվյալ ավանդային պայմանագրով վճարվող տոկոսների հաշվարկման օրինակ՝

Այսպես, ներդրվող ավանդի գումարը կազմում է 100 000 ՀՀ դրամ, ներդրման օրերի քանակը՝ 181 օր.

Քանի որ, համաձայն ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 907 հոդվածի 1-ին կետի, Բանկային ավանդի գումարի վրա տոկոսները հավելագրվում են ավանդը Բանկ մուտք լինելու հաջորդ օրվանից մինչև այն Ավանդատուին վերադարձնելու կամ ավանդատուի հաշվից այլ հիմքերով դուրս գրելու օրվան նախորդող օրը, ներդրվող օրերի քանակը կկազմի 179 օր:

- պարզ տոկոսադրույք.

$$100\ 000 * 10.0 * 179 / 365 / 100 - 10\% = 4\ 413.7$$
 ՀՀ դրամ:

- Տոկոսների կապիտալացում.

$$(100\ 000 * ((1 + 10.0 * 30 / 363 / 100)^6 - 1)) - 10\% = 4\ 555.8$$
 ՀՀ դրամ:

7. Այլ տեղեկություններ.

Լրացուցիչ տեղեկատվություն ստանալու համար կարող եք այցելել Բանկ կամ զանգահարել 59-20-40 կամ 59-20-17 հեռախոսահամարներով:

